

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N
596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« » _____ 2024 թվականի N ___ - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման.

1) Հավելված N1-ի 27-րդ կետի և Հավելված N4-ի Ցանկ N1-ի 1-ին, 2-րդ, 5-րդ կետերի <ներքին հարդարման,> բառերից հետո լրացնել <բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերում բջջային կապի բազային կայանների տեղադրման, նորոգման, արդիականացման (բացառությամբ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N638-Ն որոշմամբ նախատեսված դեպքերի)> բառերը,

2) Հավելված N4-ի Ցանկ N1-ի 7-րդ կետի 12-րդ ենթակետը լրացնել նոր՝ <ը.> պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ. <(*)ը. բնակելի, հասարակական և արտադրական նշանակության շենքերում բջջային կապի

բազային կայանների տեղադրում, նորոգում, արդիականացում
(բացառությամբ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N638-Ն
որոշմամբ նախատեսված դեպքերի):>

3) Հավելված N4-ի Ցանկ N3-ի 4-րդ կետի 3-րդ ենթակետը լրացնել նոր՝ <Է.>
պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ. <Է. ՀՀ կառավարության 2024
թվականի մայիսի 2-ի N638-Ն որոշման հավելվածով սահմանված
օբյեկտները:> ,

4) Հավելված N4-ի Ցանկ N2-ի 3-րդ կետի 1-ին ենթակետի <գ.>
պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <գ. առևտրի, հանրային
սննդի և կենցաղային սպասարկման շենքերն ու շինությունները (այդ թվում՝
Էլեկտրամոբիլների լիցքավորման վերգետնյա կայանները/տերմինալները՝
երեքը չգերազանցող քանակով), բացառությամբ՝ բեռալցակայանների և
գազալցակայանների> ,

5) Հավելված N4-ի Ցանկ N3-ի 4-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել նոր՝ <իե.>
պարբերությամբ, հետևյալ բովանդակությամբ. <իե. Էլեկտրամոբիլների
լիցքավորման ստորգետնյա կայաններ/տերմինալներ:> ,

6) Հավելված N1-ի 4-րդ կետի 19-րդ ենթակետի <հարցման հիման վրա>
բառերից հետո լրացնել <,ընդ որում, ՀՀ պետական և համայնքային միջոցների
հաշվին իրականացվող շինարարական ծրագրերի տեխնիկական պայմանների
ձեքբերումը մինչև ապագծային փուլում իրականացվում է բացառապես
ծրագրերի պատվիրատու հանդիսացող պետական և համայնքային
մարմինների կողմից.> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: